**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐ**
**МИНИСТР ТРАНСПОРТА И СВЯЗИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

# ՀՐԱՄԱՆ
# ПРИКАЗ

«28» 01 2002թ. № 10

Ք. ԵՐԵՎԱՆ

Փոստային կապի ծառայությունների
սակագների մասին

Հաշվի առնելով 1996թ. նկատմամբ ՀՓՄ-ի Միջազգային բյուրոյի փոստային ծանրոցների սակագների աճը, ինչպես նաև ՀՀ դրամի կուրսի փոփոխությունը արտարժույթի նկատմամբ՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ
:

1. Հաստատել միջազգային փոստային կապի և ՀՀ տարածքում փոստային կապի ծառայությունների սակագները և գործողության մեջ դնել 2002թ հունվարի 1-ից:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել նախարարի տեղակալ-կապի և տեղեկատվայնացման գլխավոր վարչության պետ՝ Վ. Քաչարյանի վրա:

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐ
МИНИСТР ТРАНСПОРТА И СВЯЗИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

# ՀՐԱՄԱՆ
# ПРИКАЗ

« 17 » 03 2003 Թ. № 58-Ն

Ք. ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ և ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 28-Ի ԹԻՎ 10 ՀՐԱՄԱՆԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի 2002 թ. հունվարի 28-ի թիվ 10 հրամանի մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության տարածքում փոստային կապի ծառայությունների սակագների 4-րդ կետում «8 %» թիվը փոխարինել «3 %» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ և ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐ Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ

«17» 03 2003 թ.

ք.Երևան

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐ

_______________ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

«28» դեկտեմբերի 2001թ

# ՍԱԿԱԳՆԵՐԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Կիրառվում են 2002թ. հունվարի 1-ից

# ՍԱԿԱԳՆԵՐԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

դրամ /ներառյալ ԱԱՀ/

| Հ/Հ | Փոստային առաքանու և ծառայությունների տեսակը | Սակագինը | Ծանոթություն |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | **Փոստային բացիկներ** | | |
| | **ա) հասարակ** | 35 | |
| | **բ) պատվիրած** | 85 | |
| 2 | **Նամակներ** | | |
| | **ա) հասարակ** | | |
| | մինչև 20 գր. քաշով | 70 | Զինվորական մասերի հասցեով և զինվորական մասերից ուղարկվող փոստային բացիկների ու նամակների համար վարձ չի գանձվում |
| | 20 գր.-ից մինչև 100 գր. | 170 | |
| | 100 գր.-ից -„- 250 գր. | 350 | |
| | 250 գր.-ից -„- 500 գր. | 650 | |
| | 500 գր.-ից -„- 1000 գր. | 1200 | |
| | 1000 գր.-ից -„- 2000 գր. | 1800 | |
| | **բ) պատվիրած** | | |
| | Քաշի համար վարձը գանձվում է ինչպես հասարակ նամակի համար | | |
| | Պատվերի համար վճարը գանձվում է ամբողջ առաքման համար անկախ քաշից | 50 | |
| | **գ) գնահատված** | | Գնահատված նամակի սակագինը բաղկացած է՝ հասարակ նամակի համար նախատեսված սակագնից, պատվերի վճարից և հայտարարված գնի ապահովագրական վճարից |
| | Քաշի համար վճարը գանձվում է ինչպես հասարակ նամակի համար | | |
| | Պատվերի համար վճարը գանձվում է ամբողջ առաքման համար, անկախ քաշից | 50 | |
| | Հայտարարված գնի համար գանձվում է ապահովագրական վճար | 5% | |
| 3 | **Փաթեթներ** | | |
| | **ա) հասարակ** | | Կույրերի գրքեր և ձայնագրման ժապավեններ պարունակող փաթեթների համար ուղարկման վարձ չի գանձվում |
| | մինչև 20 գր. քաշով | 60 | |
| | 20 գր.-ից մինչև 100 գր. | 120 | |
| | 100 գր.-ից մինչև 250 գր. | 200 | |
| | 250 գր.-ից մինչև 500 գր. | 360 | |
| | ... մինչև 1000 գր. | 590 | |

22

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | հետևյալ լրիվ և ոչ լրիվ 1000 գր-ի համար | 440 | |
| | բ) պատվիրած | 60 | |
| | Քաշի վարձը գանձվում է ինչպես հասարակ փաթեթների համար | | |
| | Պատվերի վճարը գանձվում է ամբողջ առաքման համար անկախ քաշից | 60 | |
| 4 | **Փոստային դրամական փոխադրություններ** | | Սոցապահովության մարմիններից ընդունված դրամական փոխադրությունների (ալիմենտ, թոշակ, նպաստ և այլն) սակագները սահմանվում են ըստ կնքված պայմանագրերի |
| | Դրամական փոխադրության գումար (ԱԱՀ չի հաշվարկվում) | ~~8%~~ 3% | |
| 5 | **Հեռագրային դրամական փոխադրություններ** | | |
| | ա) հասարակ | 210 | Փոստային դրամական փոխադրությունների համար լրացուցիչ գանձվում է % ըստ 4. կետի |
| | բ) շտապ | 630 | |
| 5.1. | Դրամական փոխադրության հետ նամակագրական հաղորդման դեպքում յուրաքանչյուր բառի համար | | |
| | ա) հասարակ | 10 | |
| | բ) շտապ | 30 | |
| 6 | **Ծանրոցներ** | | |
| | ա) հասարակ | | |
| | մինչև 1 կգ քաշով | 1260 | Զինվորական մասերից զորակոչիկների քաղաքացիական հագուստը ծանրոցներով ուղարկելու համար վարձ չի գանձվում |
| | 1 կգ-ից մինչև 3 կգ | 2020 | |
| | 3 կգ-ից մինչև 5 կգ | 2440 | |
| | 5 կգ-ից մինչև 10 կգ | 3610 | |
| | 10 կգ-ից ավել քաշով զույգ մականդրով և մեծ չափերի ծանրոցների համար լրացուցիչ գանձվում է ծանրոցի ամբողջ քաշի համար գանձված գումարի | 50% | |
| | բ) գնահատված | գնահատված գումարի 5% | Քաշի համար գանձվում է ինչպես հասարակ ծանրոցների համար |
| 7 | **Լրացուցիչ ծառայություններ** | | |
| 7.1. | Ծանուցում փոստով | | Բացիկների, նամակների, ծանրոցների և փոստային դրամական փոխադրությունների համար |
| | ա) հասարակ | 110 | |
| | բ) պատվիրված | 160 | |
| | գ) նախկինում ուղարկված | 250 | |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| .2. | Ծանուցում հեռագրով | | Հեռագրային դրամական փոխադրությունների համար |
| | ա) հասարակ | 500 | |
| | բ) շտապ | 1510 | |
| .3. | Ծանրոցները փոստային բաժանմունքում սահմանված ժամկետից (5 օր) ավելի պահելու յուրաքանչյուր 1 օրվա համար | 35 | |
| '.4. | Փոստային առաքանին ուղարկողի կամ բաժանորդի պահանջով (դիմումի առկայության դեպքում) ետ վերադարձնելու կամ այլ հասցեով վերաուղարկելու յուրաք. օրինակի համար | 105 | Քաղաքացիների կողմից թերավճար հասույթով փոստարկղ գցված հասարակ փոստային առաքանին (բացիկ, նամակ, փաթեթ) ուղարկվում է ըստ նշանակութ-յան և հասցեատիրոջը հանձնե-լուց գանձվում է հետնավճար |
| 7.5. | Քաղաքացիների հասցեներով ստացված դրամական փոխադրությունները, գնահատված նամակները տանը վճարելու կամ հանձնելու դեպքում գանձվում է վճարվող գումարի կամ գնահատված յուրաքանչյուր լրիվ և ոչ լրիվ1000 դրամի համար | 60 | |
| 7.6. | Հիմնարկ-ձեռնարկութունների կողմից երկարաժամկետ (մինչև 1տարի) լիազորագրով փոստային առաքանի ստանալու համար | 850 | Հիմնարկ-ձեռնարկությունների կողմից արկղ գցված թերավճար հասույթով հասարակ փոստային առաքանին (բացիկ, նամակ, լրաթերթ) ետ է վերադարձվում ուղարկողին լրիվ վճարման համար |
| 7.7. | Բաժանորդային արկղից օգտվելու ամսական վարձը | 1700 | |
| 7.8. | Ծանրոցի համար պարկ կարելու և ներդրանքը պարկում տեղավորելու համար (առանց կտորի արժեքի) | 170 | |
| 7.9. | Փաթեթը կամ ծանրոցը ստվարաթղթով փաթեթավորելու, կապելու և զմռսելու համար | 250 | |

Գլխավոր տնօրեն Վ. Զ. Առաքելյան